Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 480-Լ հրամանի

Ձև

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19325/2021/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան — **26/05/2021**

1. **Իշխան Գևորգյան** — ՀՎՀՀ **52192285**
(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

2. **Արմավիրի մ., գ. Մերձավան , փ. Այգեգործ 2/5**
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. **BA0711288**
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/ հանրային ծառայությունների համարանիշը)

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 18.02.2019թ.-ին ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք է ներմուծվել ԱՏԳ ԱԱ 3921190000 ծածկագրին դասվող՝ 24,000 ռուսական ռուբլի (175,680 համարժեք ՀՀ դրամ) ինվոյսային արժեքով ապրանքատեսակներ, ինչի արդյունքում գերազանցվել է ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 30-ի «ՀՀ օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ» թիվ 865-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված չափաքանակները (ԱՏԳ ԱԱ 39 (ենթադիրք՝ 3921190000) ծածկագրի համար՝ 30կգ), ուստի Դուք՝ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պարտավոր էիք ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի թիվ 865-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար Օրենսգրքի 77-րդ և 78-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր ու վճարել արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման համար հիմք են հանդիսացել ՀՀ հարկային օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները, որոնք որոշվում են համապատասխանաբար ապրանքը ՀՀ տարածք ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) կամ ապրանքը ՀՀ-ից արտահանելու (ՀՀ պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, որպիսին հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը

Ֆիզիկական անձ Իշխան Գևորգյանի կողմից իրականացված վերը նշված ներմուծման գործարքի մասով հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի վճարվել ԱԱՀ-ի գումարը, նման պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում՝ ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանք(ներ)ի ձեռքբերման արժեքը՝ 166,896 ՀՀ դրամ [24,000/600x570x7.32/փոխարժեք/]

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ԱԱՀ-ն հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ 20 տոկոս դրույքաչափով՝ 33,379 ՀՀ դրամ [166,896 x 20%]:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 14,618 ՀՀ դրամ (26/05/2021թ. դրությամբ) [33,379x417օր x 0.075%]] + [33,379x 313օր x 0.04%]]:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը (26/05/2021թ. դրությամբ) կազմում է՝ 47,997 ՀՀ դրամ [33,379+14,618]:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 26/05/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

Մաքսային մարմինների կողմից տրամադրված տեղեկատվություն

7.Ընդամենը՝

8.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի գլխավոր հարկային տեսուչ — Հայկուհի Կարապետյան